


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՍԿԷ ԱՇՈՒՆ

Posted on November 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)




Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 15 Նոյեմբեր 2022

**Գրիգոր Սաթամեան. «Թատերական ուղեւորութիւնս»
My Theatrical Journey: A memoir գիրքի շնորհանդես**

Պէյրուքի համեստ թաղերէն ելած Գրիգոր կը յաճախէ ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանը, ուր աշակերտական տարիներէն կը հիացնէ ուսանողութիւնն ու ուսուցչական կազմը իր դերասանական բնածին տաղանդով: Ի վերուստ շնորհուած ունակութիւնը կը ցուցադրէ ՀԲԸՄ-ի «Վահրամ Փափագեան» թատերախումբէն ներս՝ միաժամանակ հետեւելով Պէյրուքի Ամերիկեան Համալսարանի Տնտեսագիտութեան ճիւղին, սակայն Գրիգոր Սաթամեանին տրուած էր առիթ եւ ոսկի պատեհութիւն ծառայելու սփիւռքահայ բեմին:

Եւ այսպէս՝ 1964-ին, ՀԲԸ Միութեան կրթաթոշակով կը մեկնի Անգլիա եւ կը յաճախէ Լոնտոնի շարժանկարի արուեստի դպրոցը (London School of Film Technique) Անկէ ետք մասնագիտութիւնը կը շարունակէ Old Vic Theatre School-էն ներս: Ծննդավայր վերադառնալէն ետք Գրիգոր կը դառնայ լիբանանահայ բեմարուեստի փնտռուած աստղերէն մէկը: Գիրքին մէջ Գ. Սաթամեան յատուկ երկիւղածութեամբ կ'արտայայտուի «Վահրամ Փափագեան» թատերախումբի երախտաւորներէն Պերճ Ֆազլեանի եւ միւս գործակից դերասան ընկեր-ընկերուհիներու մասին:

Անմոռանալի օրեր էին Հայաստանեան հիւրախաղերը 1972-ին, երբ թատերախումբը հանդես եկաւ բազմաթիւ բեմադրութիւններով եւ հայրենի թատերասերները մեծ



ընդունելու փորձերը ցուցաբերեցին հասարակական կյանքի անկախ և անկողմնակալ հարուստ արտայայտչություններ, որովհետև այդ տարիներուն ես կ'ուսանէի Երեւանի մէջ եւ ներկայ կ'ըլլայի թատերախումբի ելոյթներուն: Այդ օրերուն «մեր Գրիգորն է, Սարգիս Միկասեանը, Թորոս Սարգիսեանը...» ըսելով կը հպարտանայինք համալսարանին մէջ եւ մեր ընկերական շրջանակէն ներս:

Ներկայացուած «Թատերական ուղեւորութիւնս» գեղատիպ պատկերազարդ գիրքը հարազատ կերպով կը ներկայացնէ ոչ միայն բեմի վարպետ Գրիգոր Մաթամեանի ողիսականը, այլեւ ամբողջ շրջանի մը գեղարուեստական կեանքի պատկերը, սկսելով Պէյրուսէն, շարունակելով ԱՄՆ Արեւելեան Ափ, Հարաւային Ամերիկա եւ հոսկ ապա՝ Լոս Անճելիոս: Այս ակտիւնը Գրիգոր բեմ հանեց գերազանցօրէն արեւմտահերէնով գրուած դասական եւ թարգմանական ստեղծագործութիւններ՝ ներշնչելով աւելի երիտասարդ ուժեր: Գրիգոր կրնար աւելի փայլիլ հոլիվուտեան աշխարհէն ներս, ուր կարճ, բայց դիպուկ դերեր ստանձնեց 1990-2000-ական թուականներուն մեծ ժողովրդականութիւն վայելող աստղ՝ Պրուք Շիլծի հետ (Brook Shields), բայց նախընտրեց ծառայել ՀԱՅ ԹԱՏՐՈՆԵՆ ՆԵՐՍ: Ան հետեւեալ խօսքով կը ներկայացնէ իր որոշումը. «Հոլիվուտի մէջ՝ հայ մը աւելի մեծ տարբերութիւն պիտի չընէ, սակայն անձ մը աւելի հայ թատրոնի եւ մշակոյթի մէջ հսկայ տարբերութիւն պիտի ընէ: Ես տակաւին իմ յարաբերութիւններս չեմ իզգած իրենց հետ, այն իմաստով որ, երբ պետք ունենան, կը կանչեն զիս: Ես կ'ուզեմ որ Նոր սերունդը հետաքրքրուի մուտք գործելով՝ արիեստաՎարժ այդ ասպարեզին մէջ եւ եթէ հարկը պահանջէ, պատրաստ եմ օգնելու անոնց»:

Կիրակի, 13 Նոյեմբերին, ՀԲԿՄ-ի «Պոյաճեան» սրահին մէջ կատարուածը սոսկ գիրքի շնորհանդես չէր, այլ յաւուր պատշաճի հանդիսութիւն մը, ուր մեծարուեցաւ դերասանապետ, բեմադրիչ, մշակոյթի գործիչ Գրիգոր Մաթամեանը: Բացման խօսքով Պրն. Գեորգ Թեօշկերեան դիտել տուաւ այս հանգամանքը եւ, որպէս Գրիգոր

Սաթամեանի ղեկավարած «Արտաւազը» թատերախումբի երկար տարիներու դերասան, շեշտը դրաւ «օրուան հերոսին» ոչ միայն տաղանդին, այլեւ որպէս մշակոյթի մարդու վրայ, մարդ մը, որ կրնայ հրամանատարի մը նման խանդավառել գործակիցները: Օրուան գլխաւոր բանախօսն էր Տոքթ. Գրիգոր Սիմոնեան՝ թատերախումբի վարչական կազմի ատենապետը: Ան կենսագրական կարեւոր հանգրուաններու ընդմէջէն ներկայացուց Գրիգոր Սաթամեանի մեծ ծառայութիւնը սփիւռքահայ թատրոնի կեանքէն ներս իբրեւ ներշնչող դէմք: Յուշապատումով հանդէս եկաւ նաեւ Գրիգոր Սաթամեանի ուսանողական ընկեր եւ դերասան Պրն. Տիգրան Էքիզեան, որ իրեն յատուկ համով-հոտով պատումով արժեւորեց եօթանասուն տարուայ ընկերն ու արուեստագետ գործիչը:

Կ'արժէ յիշել եւ շնորհակալութիւն յայտնել ներկայացուած գիրքի մեկենաս, մշակութասեր եւ լայն սրտի տեր հայ Պրն. Նազարեթ Գեւորեանին, ինչպէս նաեւ գիրքի ձեւաւորող Հերիկ Մեսրոպեանին, որուն գեղագետի հպումներուն շնորհիւ թատերասեր հասարակութեան տրամադրութեան տակ դրուած է *My Theatrical Journey: A memoir* պատկերազարդ գիրքը:

ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարան (Քանուկա փարք, Քալիֆորնիա)

Հանգստեան կոչուած ուսուցիչի մը համար ուրախութեան եւ հպարտութեան առիթներ են, երբ ան կը հանդիպի իր սաներուն՝ արդէն մեծցած, հասուն երիտասարդներ դարձած, մասնագիտութեան տիրացած, տուն-տեղ կազմած եւ իրենց հերթին իրենց զաւակները նոյն դպրոցի խնամքին յանձնած հասուն քաղաքացիներու:



Տարբեր տարիներու շրջանաւարտներ

Այս զգացումը ունեցանք մենք Շաբաթ, Նոյեմբերի 5-ի երեկոյեան, ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի (ՄՏՎ) հիւրընկալ բակին մէջ, երբ գիրկընդխառնումներով գիրար ողջունեցինք՝ թե՛ ուրախութեան եւ թե՛ յուզումնախառն արցունքներով:

Երկրորդ տարին է որ վարժարանի Շրջանաւարտից կապերու բաժանմունքը լուրջ գործի անցած է եւ կը հետաքրքրուի ՄՏՎ-ի սեմէն անցած աշակերտներով:

Շնորհաւորանքի եւ երախտագիտական խօսքերու արժանի է պատասխանատուն Տիկ. Վերոնիկա Գարատանայեանը, որ արհեստավարժօրէն կը հետեւի շրջանաւարտներուն՝ նպատակ ունենալով զօրացնել շրջանաւարտ-ՄՏՎ յարաբերութիւնը, որմէ միայն բարիք կը ծնի եւ վարժարանի կենսունակութիւնն ու բարգաւաճումը կ'ապահովուի: Կ'ընդգծեմ նաեւ Տնօրէնուհի, երկարամեայ ուսուցչուհի Անահիտ Նալբանդեանի ջանքերը՝ ի մի հաւաքելու մեր սան-սանուհիները: Այս օրերուն եւ այս ակերուն վրայ հայ վարժարանը ամրոց մըն է, իւրայատուկ ապաստարան մը, ուր կարելի եղած թափով կը ջամբուի հայեցի կրթութիւն ու դաստիարակութիւն եւ անշուշտ՝ ժամանակակից ուսում:

Ինծի համար հոգեպարար երեւոյթ էր տեսնել, խօսիլ, զրուցել, հետաքրքրուիլ սաներուս անձնական կեանքով, ընտանիքով եւ այս բոլորը բացառաբար ՀԱՅԵՐԷՆ լեզուով: Ուրեմն մեր ջանքերը ի զուր չեն անցած եւ մենք ստացած ենք մեր տուածին դիմաց՝ անելի անուշցած: Երկու առիթներով ալ իմ հակիրճ կոչիս մէջ շրջանաւարտներուն դիմելով ըսի.

-Այս դպրոցը ամենէն առաջ ձե՛րն է, ձեր զաւակներունն է եւ անոնց զաւակներունը պետք է ըլլայ: Գուրգուրացէք այն հաստատութեան վրայ, որ ձեզի այս յաջողութիւններու հասցուց:

Ո՛չ միայն տեր կենանք մեր դպրոցներուն ու հաստատութիւններուն, այլեւ ամեն տարի մեկով անեցնենք, քանզի՝

«Հայ դպրոցը տո՛ւնն է հայուն, աշխարհի չորս ծագերուն»:



Նախկին և ընթացիկ ուսուցիչներ

Comments



Գեորգ Եազրճեան – 2022-11-27 00:02:33

Որքան գիտեմ՝ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանը ՀԱՅԿԱԿԱՆ վարժարան է: Արդ, ինչո՞ւ հայերենը ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՑԱԿԱՅ է խմբանկարի ետին երեւցող հսկայական պաստառի մեծաչափ գրուածանց մէջ: Մեսրոպեան տառեր գտնելու համար դիմեցի խոշորացոյցի եւ, փառք Աստուծոյ, զանոնք գտայ դպրոցի շրջանաձեւ տարբերանշանին մէջ, ուր, անգամ մը եւս փառք Աստուծոյ, ՀԲԸՄ տառերը դեռ չեն փոխարինուած AGBU-ով: ***** Ակնբախ է երկրորդ տարօրինակ փաստը՝ խմբանկարին մէջ կ'երեւին 13 տիկիններ, իսկ միակ տղամարդն ալ ՈՒՍՈՒՑԻՉ դուրս. Մինաս Գոճայեանն է: Այս դպրոցը աղջկա՞նց դպրոց է, թե՞ երկսեռ: Եթէ երկսեռ է, մէկ արու շրջանաւարտ իսկ ինչո՞ւ չէր եկած: